

Գրիգորի հետ հրաժարելով Թեոդորոսէ, քանի որ Վարդանաբերդի կը մօտենային՝ անհանգիստ լինելով ամրոցին վիճակին վրայ եւ տեսնելով, որ Գրիգոր եւ շատերը յոգնած էին, որոշեց ժամ առաջ երթալ եւ յայտնելով առջի իրիկվն՝ կես-գիշերուն ճամփայ ելած հասեր էր Վարդանաբերդի մօտ, եւ հեռուանց տեսնելով խուռն բազմութիւն եւ զինուց փայլ՝ վտանգ մը երեւակայելով լճին ճամփան բռներ սկսեր էր մօտենալ, եւ տեսնելով հեռուանց կին մը եւ աղջիկ մը մակոյկին մէջ, որ դէպի կղզին կը դիմէին, եւ իմանալով թէ Բիւրեղ տիկին ինքն էր, երբ հնարք կը մտածէր զինքն ազատելու եւ արդէն նետահար ըրած էր խափշիկը, որ կը հալածէր, տեսեր էր մօր եւ զաւկին ջուր նետուիլն եւ անհետանալը, ուստի այս տղեկը միայն ազատելով կ'ուզար մահն ի սիրտ: Խեղճ զինուորը կը պատմէր եւ կուլար: Բարի կինը մտիկ ընելով ջուրի պէս արցունք կը թափէր, երկուքն էլ միասին կը յիշէին Տիկնոջ ազնիւ սիրտը, ջուր առաքինի վարմունքը, հեզ հոգին: Նորա ընծաներն էին, որ զարդաբեր էին իրենց տունը, Չաւեն կը յիշէր այն օրերը, որ Նա Մամիկոնեանց տան հարս եկած էր եւ սիրելի եղած էր իր քաղցրութեամբ մեծին եւ փոքրին:

— Իսկ դու Զիմա ի՞նչ պիտի ընես,— ըսաւ կինը:

— Ես այս գիշեր կ'երթամ. այդ ճիւղները կենալու միտք չունին, վասնզի ամրոցին բոցը տեսայ. իշխանիկը կ'երթամ ու կաշխատիմ գտնել եւ իմացնել մօր եւ քրոջ մահը, իմացնել իբր միսիթարութիւն Արփենիին ազատիլը, թէպէտ կորուստները մեծ են, բայ ինչ ընենք: Խեղճ երիտասարդ, ինչպէ՞ս մայրը կը պաշտէր... Երբ կ'երթայինք վերջին անգամ... «Գրիգորս քեզ կը յանձնեմ, Չաւեն հայրիկ...»:

Եւ հեկեկանքը խեղդեցին կորովի ծերուն ձայնը:

Իսկ դուրսը պարտեզը մեծ ուրախութիւն կար. մեծ եւ պզտի տղայք եւ աղջկունք Արփենիի տօնը կը կատարէին. պարտեզին ծայրը Երասխի ափանց Նայրոզ բարձրաւանդակին վրայ, գեղջկական կանաչագեղ հովանոցի մը տակ սեղանը կը պատրաստէին, տանտիկինն զբաղեալ էր կերակրոյ պատրաստութեամբ, իսկ Չաւեն յոգնած եւ տխուր խոր քունէ արթնացաւ զօրացեալ, երբ արդէն կես-գիշերը մօտ էր: Ընթրեաց ժամանակ Արփենի յայտնեց թէ ամրոցէն լաւ էր այս տունը, ուստի կուգէր, որ հոն բերէ Չաւեն հայրիկ՝ մայրիկը: Երբ ընթրիքը վերջացաւ եւ պզտիկները քնացան, Չաւեն հեծաւ եւ ելաւ դառնալու Վարդանաբերդ: